ԵՎՐԱՍԻԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ, ք. Երևան 0037

Ազատության պող. 1/21, բն. 23

Հեռ. 374 10 25 15 75

Info-epf@epfound.am; www.epfarmenia.am

Հիմնավորում՝ Հասարակական խորհրդում ԵՀՀ-ի ներգրավման վերաբերյալ

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) իր գործունեության ընթացքում իրականացրել և ֆինանսավորել է բազմաբնույթ ծրագրեր, որոնք նպաստել են ոստիկանության և միգրացիայի ոլորտներում կառավարման համակարգերի բարելավմանը, ինչպես նաև միգրանտների իրավունքների պաշտպանությանը: Նման լայնածավալ փորձառությունը հիմք է հանդիսանում, որ ԵՀՀ-ն ներգրավվի ՆԳ նախարարին կից հասարակական խորհրդում՝ նպաստելու ոլորտային բարեփոխումների ավելի արդյունավետ իրականացմանը:

ԵՀՀ-ի տարիների փորձառությունը և գործնական լուծումներ տրամադրելու կարողությունը ԵՀՀ-ին դարձնում են խիստ անհրաժեշտ գործընկեր՝ Հասարակական խորհրդի շրջանակներում: Կազմակերպության իրականացրած ծրագրերը ցույց են տալիս ոչ միայն ոլորտային խնդիրների խորքային ընկալումը, այլև դրանք հաղթահարելու համար ռազմավարական և մեթոդական մոտեցումների մշակման կարողությունը:

Հասարակական խորհրդի կազմում ներգրավվելով՝ ԵՀՀ-ն կարող է իր փորձն օգտագործել հետևյալ հիմնական ուղղություններով.

- Խորհրդատվություն և վերլուծական աջակցություն՝ մարդու իրավունքների պաշտպանության, քրեական արդարադատության բարելավման, միգրանտների խնդիրների լուծման համար.
- Հանրային քաղաքականությունների մշակման աջակցություն՝ հիմնված հավաքագրված տվյալների և վերլուծությունների վրա.
- Իրազեկման ծրագրերի իրականացում՝ հասարակական ընկալումների փոփոխման համար.
- Միջոլորտային համագործակցության խթանում՝ պետական, հասարակական և միջազգային կառույցների միջև կապերի ամրապնդման նպատակով:

ԵՀՀ-ն մասնակցել է բազմապիսի քաղաքականությունների մշակմանը, որոնք ուղղակի կամ անուղղակի առնչվում են **ՀՀ իրավապահ մարմինների, այդ թվում՝ Ոստիկանության** գործունեության հետ:

ԵՀՀ-ն ներկայումս ներգրավված է Արդարադատության նախարարությանը կից հասարակական խորհրդում, ինչպես նաև հանդիսանում է ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի ներքո գործող Ատելության խոսքի հարցերով աշխատանքային խմբի անդամ և կանանց հարցերով խորհրդի աշխատանքային խմբի անդամ:

ԵՀՀ-ն եղել է ներգրավված Ոստիկանությանը կից հասարակական խորհրդում, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի համակարգման խորհրդում, ինչպես նաև ակտիվ ներգրավված է եղել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներին:

ԵՀՀ-ն նաև հանդիսացել է «Իրավապահ մարմինների վերապատրաստում՝ ատելությամբ պայմանավորված հանցագործությունների դեմ պայքարի ուղղությամբ» աշխատանքային խմբի անդամ, որը կազմակերպվել է ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի և Երևանում ԵԱՀԿ գրասենյակի կողմից: ԵՀՀ մարդու իրավունքների ծրագրի տնօրենը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից հավաստագրված դասընթացավար է, ինչը հնարավորություն է տալիս վերջինիս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի հետ համատեղ ԵԱՀԿ անդամ պետությունների իրավապահ մարմինների, այդ թվում՝ **ՀՀ ոստիկանության համար մշակել և իրականացնել ատելության խոսքի վերաբերյալ տեղայնացված դասընթացներ**:

ԵՀՀ-ն մասնակցել է նաև ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և ՀՀ արդարադատության նախարարության Անչափահասների արդարադատության խորհրդի աշխատանքներին՝ փորձագիտական ներդրում ունենալով երեխայի իրավունքների կատարելագործման ոլորտում, որտեղ առանցքային է նաև **ՀՀ ոստիկանության դերակատարությունը**: ԵՀՀ-ն ընդգրկված է նաև ՀՀ կառավարության՝ Կայուն զարգացման նպատակների ազգայնացման ուղղությամբ կազմավորված միջգերատեսչական հանձնաժողովում՝ Սոցիալական, Իրավական և ժողովրդավարական հավասարության ուղղություններով, ինչն, ի թիվս այլոց, ենթադրում է պետական մարմինների և քաղաքացիական հասարակության հետ համատեղ արդարադատության համակարգի, ներառյալ՝ **Ոստիկանության գործունեության բարելավմանն ուղղված քաղաքականության մշակում**:

ԵՀՀ-ի գործունեության արդյունավետությունը, ծրագրերի բազմազանությունն ու արդյունքները վկայում են կազմակերպության կարևորության մասին հասարակական խնդիրների լուծման գործում: Հաշվի առնելով այս ամենը՝ ԵՀՀ-ի ներգրավումը ՆԳ նախարարին կից Հասարակական խորհրդում կնպաստի ոստիկանության և միգրացիայի կառավարման բարելավմանը: